

Մարիամ Օհանյան
*ԵՄՀ իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի
երկրորդ կուրսի ուսանողուհի*

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ*

Մասնկության հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության տնտեսական կայունության երաշխիքներից մեկն է:

Հետազոտության հիմնական նպատակն է համալիր ուսումնասիրության ենթարկել սնանկության ինստիտուտը կարգավորող օրենսդրության համակարգը, և դրանում առկա խնդիրների վերհանման արդյունքում տալ տեսականորեն հիմնավորված այնպիսի առաջարկներ, որոնք, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ դեռևս ձևավորվող իրավական համակարգի առանձնահատկությունները, կնպաստեն ոլորտի իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

Հիմնաբառեր. սնանկություն, անվճարունակություն, պարտատեր, պարտապան, վճարային պարտավորություն, սնանկության հիմքեր, սնանկության ինստիտուտ, տնտեսական հարաբերություն, կամավոր և հարկադիր սնանկություն:

Ցանկացած իրավական երևույթ սոցիալական ոլորտի հետ հարաբերակցվում է առնվազն երկու մակարդակով. նախ՝ սոցիալական գործոններն են կանխորոշում այն շահերը, որոնք պետք է ենթարկվեն իրավական պաշտպանության, ապա դրանց իրավական պաշտպանության արդյունքում նույն սոցիալական ոլորտը կրում է որակական փոփոխություններ և միաժամանակ իր կնիքն է դնում իրավական զարգացումների ուղղվածության բովանդակային հստակեցման գործընթացների վրա:

*Ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 15-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի ունեցած ուսանողական ամենամյա գիտաժողովի ընթացքում քննարկված նյութերի հիման վրա:

Տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումը եղել և շարունակում է մնալ պետության՝ որպես քաղաքացիների համընդհանուր շահերն արտահայտողի պարտադիր ֆունկցիա: Բնականոն կերպով զարգացող տնտեսական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում ի հայտ եկող շեղումների վերացման իրավական կառուցակարգերից մեկը մասնավոր և հանրային իրավունքի հատման կետում գտնվող սնանկության ինստիտուտն է: Մասնկության ինստիտուտն անցել է երկարատև ուղի՝ պատմական ընթացքի ամեն մի փուլում արտացոլելով սոցիալ-տնտեսական կացութաձևի ու գաղափարական արժեքների համապատասխան մակարդակը: Այսօր գործում են սնանկության հինգ նմուշօրինակներ (մոդելներ)՝ ծայրահեղ պրոպարտապանական, պրոպարտապանական, ծայրահեղ պրոպարտատիրական, պրոպարտատիրական և չեզոք: «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերլուծությունը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ Հայաստանի սնանկության համակարգը չեզոք է, այսինքն՝ հնարավորություն է տալիս, չխախտելով պարտատերերի շահերը, պահպանել և շարունակել կազմակերպության գործունեությունը:

Գործարարական հարաբերությունների բնականոն իրականացման կարևորագույն պայմաններից մեկը նրա մասնակիցների բարեխիղճ և արդյունավետ աշխատանքն է: Մասնկության ինստիտուտի օգնությամբ հնարավոր է լինում տնտեսական համակարգում իրականացնել կառուցվածքային փոփոխություններ՝ համակարգից հեռացնելով գույքային շրջանառության անբարեխիղճ մասնակիցներին և իրականացնելով նրանց պատկանող նյութական միջոցների վերաբաշխում հասարակական հարաբերությունների բարեխիղճ մասնակիցների միջև:

Տնտեսական հարաբերությունների սուբյեկտներին սնանկ ճանաչելու միջոցով իրագործվում է պարտատերերի (տնտեսական հարաբերության սուբյեկտներն իրենց վրա դրված պարտավորությունները չկատարելու համար պատասխանատու են ամբողջ գույքով), պարտապանի (երբեմն հնարավոր են լինում որոշակի միջոցների կիրառմամբ բարելավել նրա ֆինանսական վիճակը ֆինանսական առողջացման ծրագրի միջոցով, բավարարել պարտատերերի պահանջները՝ առանց պարտապանի գործունեությունը դադարեցնելու) և հանրային շահերի պաշտպանությունը (սնանկության ինստիտուտը հնարավորություն է տալիս ժամանակին ազատվել տնտեսական հարաբերության այն մասնակիցներից, որոնք խաթարում են այդ հարաբերությունները, հետևաբար և պաշտպանել հանրային շահերը)²: Իրավաբանական անձին սնանկ ճանաչելը հանգեցնում է դրա լուծարման, իսկ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ նրանց՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման դադարեցման և կրկին գրանցվելու անհնարինության՝ սնանկ ճանաչելու պահից հինգ տարվա ընթացքում, ինչպես նաև նրան տրված բոլոր լիցենզիաների դադարման:

1 Տևա Иванова-Паленова, Е.В. Предпринимательское право: учебник для бакалавров. Москва, издательство Юрайт, 2012, էջ 267:

2 Տե՛ս Բարսեղյան Ս., Գործարարական իրավունք, դասագիրք, Երևան, 2009, էջ 153-154:

Մասնկության հարաբերությունների իրավական կարգավորման համար չափազանց կարևոր նշանակություն ունի սնանկության հիմքերի իրավական ամրագրումը և սնանկության հիմքերի վերաբերյալ օրենսդրի որդեգրած մոտեցումը: Մասնկության մասին օրենսդրությունը հետխորհրդային Հայաստանի օրենսդրության առավել արագ փոփոխություններ կրող և զարգացող ինստիտուտներից մեկն է: 1991 թվականին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, սկսվեց նաև այս ոլորտի համար իրավական կարգավորման ճիշտ ու արդարացված մոդելների որոնումը, որի հետևանքը 1995թ. «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին», 1996թ. «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին», 2003թ. «Անվճարունակության (սնանկության) մասին» և 2006 թ. «Մասնկության մասին» ընդունված ՀՀ օրենքներն էին: «Մասնկության մասին» ՀՀ օրենքը, կախված այն հանգամանքից, թե ով է սնանկության գործ հարուցողը, նախատեսում է անհատ գործարարներին և իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու տարբեր հիմքեր: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դեպքում), եթե պարտապանն անվճարունակ է: Չնայած այն հանգամանքին, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը և՛ կամավոր, և՛ հարկադիր սնանկության հիմք է համարում անվճարունակությունը, այնուամենայնիվ, օրենսդրական ձևակերպումներից բխում է, որ գործարարական հարաբերությունների սուբյեկտներին սնանկ ճանաչելու համար օրենսդիրը հիմք է համարում տնտեսական երկու կատեգորիաներ՝ վճարելու անկարողությունը և անվճարունակությունը¹: Վճարելու անկարողությունն առկա է այն դեպքերում, երբ պարտավորությունների գումարը գերազանցում է պարտապանի ունեցվածքի արժեքը, և նա չի կարող բավարարել բոլոր պարտատերերի պահանջները: Ըստ օրենքի 3րդ հոդվածի՝ պարտապանն անվճարունակ է (վճարելու անկարող), եթե առկա է հետևյալ հիմքերից մեկը. ա) պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ (հաշվեկշռային անվճարունակություն), բ) պարտապանն ի վիճակի չէ կատարել իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն):

Անվճարունակությունն առկա է այն դեպքում, երբ, անկախ բոլոր պարտատերերի պահանջների բավարարման համար առկա ունեցվածքից, պարտապանը թույլ է տալիս անվիճելի վճարային պարտավորությունների կետանց²: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության

1 Стів Бєльх В., Правовое регулирование предпринимательской деятельности в России, Москва, 2005, էջ 293:

2 Стів Բարսեղյան Ս., նշված աշխ., էջ 157:

դեմ, սակայն՝ ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը, բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը), գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը), դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Այսինքն՝ տարբերակվում է անվճարունակության երկու ձև՝ փաստացի և հաշվեկշռային: Անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքը նույնպես տարբերակում է անվճարունակության երկու ձև՝ հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում) և փաստացի, այն է՝ այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել: Անվճարունակության այս երկու տարատեսակները միմյանցից տարանջատված են, և պարտապանին սնանկ ճանաչելու համար օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու տարատեսակների միաժամանակյա առկայության պահանջ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ՀՅԲԴ/0414/04/08 քաղաքացիական գործի¹ շրջանակներում կայացված որոշմամբ արձանագրեց, որ այն դեպքում, երբ տվյալ դրամական պարտավորության հիմքում ընկած են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, վճարային պարտավորությունն անվիճելի է: Ընդ որում, սնանկության գործի հարուցման հիմնական չափանիշ օրենքը համարում է անվճարունակությունը, քանի որ պարտքերի հանրագումարի չափը համարվում է անվիճելի փաստ, և պարտատերերի պահանջները պարտապանի կողմից վիճարկելը դատարան դիմելուն արգելք չի հանդիսանում: Վիճարկման դեպքում պահանջի հիմնավորվածությունը և պարտքերի հանրագումարի չափը կարող է որոշել դատարանը²:

Ցանկանում ենք անդրադառնալ նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0074/04/09 գործով³ կայացված որոշմանը: Տվյալ գործի շրջանակներում խնդրո առարկա էր դարձել հետևյալ հարցը. արդյո՞ք սնանկ ճանաչելու հիմքում դրված գործարքների վիճարկման պայմաններում պարտավորությունը համարվում է անվիճելի, և արդյո՞ք սնանկ ճանաչելու հիմքում դրված գործարքների վիճարկումը կարող է համարվել տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքի առկայություն: Վճռաբեկ դատարանը գտավ, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ»

1 Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52753>, քաղաքացիական գործ թիվ ՀՅԲԴ/0414/04/08:
2 Տե՛ս Карелина С., Правовое регулирование несостоятельности (банкротства): учеб.практ. пособие, Москва, 2002, էջ 24:

3 Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի (հունվար–դեկտեմբեր 2011)», Երևան, 2012, էջ 74–79:

կետի հիմքով վճարային պարտավորությունների անվիճելի լինելը կասկածի տակ առնելու համար բավարար է ոչ միայն պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերի առկայությունը, այլև նյութաիրավական վեճի առկայությունը, որն ինքնին պարտավորության վիճելիությունը հավաստող հիմք է, և որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ներառում է նաև պարտավորության հիմքերի հետ կապված նյութաիրավական վեճի առկայությունը: Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ կողմերի միջև ծագել է նյութաիրավական վեճ, որը քննարկվում է մեկ այլ գործի վարույթում, իսկ պատասխանողի կողմից հայցադիմում ներկայացնելը, ինչպես նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշման առկայությունը գնահատվում է որպես ապացույց այն մասին, որ պատասխանողը բավարար հիմքեր ունի սնանկ ձանաչելու պահանջի դեմ առարկելու համար:

Վճռաբեկ դատարանը, թիվ 32475 (ՏԴ) գործի շրջանակներում պատասխանելով «արդյո՞ք սուբյեկտին սնանկ (անվճարունակ) ձանաչելիս դատարանը պետք է անդրադառնա նյութաիրավական վեճի առկայությանը» հարցին, նշում է. «Դատարանները վիճելիության հիմքով սնանկության պահանջը մերժելիս չպետք է ըստ էության անդրադառնան նյութաիրավական վեճին՝ չսահմանափակելու համար այդ վեճի քննության համար դատարան դիմելու անձի իրավունքը»¹:

Չնայած, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը կարգավորման է ենթարկում այս ոլորտի հարաբերությունները, այնուամենայնիվ, այն ունի որոշակի թերություններ, որոնք պետք է շտկվեն: Նախ՝ առաջին իսկ հայացքից նկատվող թերություններից մեկն այն է, որ օրենքում բացակայում է հիմնական հասկացությունների մեկնաբանմանը նվիրված հոդվածը, մինչդեռ սա այն նորմատիվ իրավական ակտն է, որը ՀՀ օրենսդրության համակարգ է ներմուծում նոր հասկացություններ: Հիմնական հասկացությունների բացակայությունը հանգեցրել է նրան, որ սնանկության առանձին ընթացակարգերի, սուբյեկտների, կատեգորիաների բնորոշումները կամ բացահայտված չեն օրենքով (սնանկություն, անվճարունակություն, կառավարիչ, ժամանակավոր կառավարիչ, պարտատերերի ժողով, խորհուրդ), կամ տրվում են առանձին հոդվածների շրջանակներում (ֆինանսական առողջացում, ֆինանսական առողջացման ծրագիր, կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն, ապահովված պարտավորություններ), ինչն ավելորդ ծանրաբեռնվածություն է օրենքի առանձին հոդվածների համար: Մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահման-

1 Տես «Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (սեպտեմբեր-դեկտեմբեր 2006)», Երևան, 2007, էջ 446:

նումները (հոդվ. 42)¹:

Հաջորդ խնդիրը օրենքի մեջ դրա նպատակների վերաբերյալ առանձին հոդվածի բացակայությունն է: Ինստիտուտի նպատակների օրենսդրական ամրագրումն առանցքային նշանակություն ունի, քանի որ օրենքի նպատակների հետ է կապվում սնանկության վարույթի իրավական կարգավորման ուղղվածությունը:

Կարծում ենք, որ օրենքը չունի հասարակության սոցիալական պաշտպանության իրականացման և ապահովման համար անհրաժեշտ ծանրաբեռնվածություն: Օրենքով նախատեսված պարտատերերի պահանջների բավարարման կարգը չի համապատասխանում իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորչի դերին ու նշանակությանը: Անդրադառնալով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված պարտատերերի պահանջների բավարարման հերթականությանը՝ կարծում ենք, որ այն պետք է ենթարկվի զգալի փոփոխությունների՝ ստորև նշված հիմնավորումներով:

Օրենքի 82-րդ հոդվածը սահմանում է, որ ապահովված պարտատերերի պահանջները, կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը հատուցելուց հետո միայն բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման հաշվարկի միջոցով, ինչպես նաև պարտապան քաղաքացու նկատմամբ ալիմենտների գծով (երեխա, անաշխատունակ ծնող, անաշխատունակ ամուսին), աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները՝ ներառյալ պարտապանին սնանկ ձանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումն առաջացած, բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ձանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները և սույն հերթի պահանջների բավարարումից առաջացած եկամտային հարկի ու պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումները: Կարծում ենք, որ տվյալ հոդվածի դրույթները հակասում են նաև Սահմանադրության որոշ դրույթների, քանի որ Սահմանադրության առաջին հոդվածը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է սոցիալական պետություն, իսկ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածը շեղվում է սոցիալական պետության գաղափարից և առաջնորդվում միայն շուկայական հարաբերություններին բնորոշ գույքային ապահովվածության գերապատվության, մասնավոր շահերի առաջնահերթության սկզբունքներով: Հակասոցիալական է նախ օրենքի այն դրույթը, որը նախատեսում է, որ 2-րդ հերթով են բավարարվում այն քաղաքացիների պահանջները, որոնց կյանքին կամ առողջությանը պարտապանը վնաս է պատճառել կամ որոնց նկատմամբ ունի ալիմենտային պարտավորություններ, ինչպես նաև այն դրույթը, որ պահանջների բավարարման 3-րդ հերթի

¹ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՀԳՏ 02.05.21/15(190), հոդված 42:

շրջանակներում կարող են բավարարվել միայն աշխատանքային պայմանագրերից բխող (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումն առաջացած) պահանջները, բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը: Ստացվում է, որ չեն քննարկվում անձանց աշխատանքային պայմանագրերից բխող այն պահանջները, որոնք առաջացել են սնանկ ճանաչելու պահին նախորդող ավելի վաղ շրջանում: Կարծում ենք, որ ապահովված պարտատերերի պահանջները պետք է բավարարվեն հետևյալ կարգով՝ պարտապանի աշխատողների և կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների համար պարտապանից հատուցում ստացող անձանց պահանջները բավարարելուց հետո միայն:

Մեր կարծիքով, օրենքում պետք է կատարվի փոփոխություն՝ սնանկության հիմքերի հայտնաբերման դեպքում հարկադիր կատարողի վրա պարտականություն դնելով կատարողական վարույթում պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան: Կարծում ենք, որ հարկադիր կատարողը, կատարողական վարույթի ընթացքում, պարզելով, որ առկա են պարտապանի սնանկության հիմքերը, պետք է դիմի դատարան նրան սնանկ ճանաչելու պահանջով՝ չսպասելով պարտապանի կամ նրա պարտատերերի՝ դատարան դիմելու իրավունքի իրականացմանը, ինչպես դա նախատեսված էր նախկինում: Մինչև 22.12.2010 թ. փոփոխությունը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «պարտատիրոջ կամ այլ անձանց դատարան դիմելու պարտականությունը» վերտառությամբ, 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության հիմքերի հայտնաբերման դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դիմել դատարան՝ անկախ նրանից, թե այդ բոլոր կատարողական վարույթները գտնվում են նույն հարկադիր կատարողի մոտ, թե ոչ: Ներկա իրավակարգավորման պայմաններում հարկադիր կատարողը, գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզելով, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթ(ներ)ով պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում, գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթ(ներ)ով որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթ(ներ)ը և առաջարկել պարտատիրոջն ու պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դա-

տարան, և եթե կատարողական վարույթը կասեցնելու որոշումը հրապարակելուց հետո ի հայտ են գալիս նոր պարտատերեր կամ արդեն հայտնի պարտատերը կամ պարտապանը դիմում են հարկադիր կատարողին կատարողական վարույթը չվերսկսելու դիմումով, ապա հարկադիր կատարողն առաջարկում է նրանց սնանկության հայց ներկայացնել դատարան և կատարողական վարույթ չի վերսկսում: Եթե սույն մասով սահմանված ժամկետում պարտապանի կամ պարտատիրոջ կողմից սնանկության հայց չի ներկայացվում դատարան, կամ ի հայտ չեն գալիս նոր պարտատերեր, ապա հարկադիր կատարողը վերսկսում է կատարողական վարույթը:

Ստացվում է, որ երբ պարտապանը, պարտատերը չեն դիմում դատարան սնանկ ճանաչելու պահանջով, անվճարունակ սուբյեկտները շարունակում են գործել՝ մտնելով նոր քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ ստանձնելով նոր պարտականություններ, և, բնականաբար, լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում իրենց հետ այդ հարաբերությունների մեջ մտնող սուբյեկտների համար: Այս պարագայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքը նախկինում ավելի ճիշտ կարգավորում ուներ՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում հարկադիր կատարողի վրա դնելով սնանկության հայց ներկայացնելու պարտականություն, որը, մեր կարծիքով, պետք է վերականգնել:

Սնանկության ընթացակարգը ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում հանդիսանում է տնտեսության և իրավունքի ոլորտների հասարակական հարաբերությունների կարևորագույն տարր, տնտեսական գործունեության մասնակիցների խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործող միջոց, ինչպես նաև բիզնես ոլորտի ոչ կենսունակ տարրերի «ինքնակարգավորման» և «ինքնամաքրման» կարևորագույն գործիք: Այդ իսկ պատճառով կարևոր է տվյալ ոլորտում ժամանակին օրենսդրական բացերի վերհանումը և խնդիրների լուծումը:

Мариам Оганян

*Студентка 2-ого курса магистратуры юридической кафедры
Международного университета Евразия*

ПРАВОВЫЕ ОСНОВЫ БАНКРОТСТВА СУБЪЕКТОВ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОГО ПРАВА

Правовое регулирование отношений банкротства – залог экономической стабильности в каждой стране.

Основной целью статьи является изучение правовой системы института банкротства и вынесение теоретически обоснованных предложений для решения существующих проблем в этом вопросе, что будет способствовать повышению эффективности отношений правового регулирования банкротства.

Ключевые слова: банкротство, неплатежеспособность, кредитор, должник, денежное обязательство, основы банкротства, институт банкротства, экономические отношения, добровольное и обязательное банкротство.

Mariam Ohanyan

*MA 2nd year student
Department of Law, Eurasia International University*

LEGAL GROUNDS OF BANKRUPTCY OF SUBJECTS OF BUSINESS LAW

The legal regulation of bankruptcy relationships is the guarantee of economic stability in each country.

The main objective of the research is to study the legal system of bankruptcy Institute and give theoretically grounded suggestions for available problems which will contribute to Increasing efficiency of the legal regulation of bankruptcy relationships.

Key words: Bankruptcy, insolvency, creditor, debtor, payment obligation, bankruptcy bases, bankruptcy institute, economic relations, voluntary and mandatory bankruptcy.